

Փ Ո Ւ Ն Ձ

Օ Ր Ա Գ Ի Ր

Ամեն օր կհրատարակուի: — Հետք 10 փարայ է: — Պօլիս բաժանորդ ըլլալ ուզողը մէկ արծաթ Մէճիա պիտի վճարէ 100 թուոց համար. իսկ գաւառաց մէջ 25 դրչ, դարձեալ 100 թուոց համար, թղթատարութեան ծախքէ ազատ ըլլալով: — Մանուկման տողը 40 փարայ է մէկ անգամի համար: — Լրագրիս վերաբերեալ նամակ եւ ուրիշ որ եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնն ի Ղալաթիա Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ վարի գրանը կից Նոր Գրատունը:

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ

Երէկ խառն ժողովը ներկայացրէ բարձր. Ապի փաշայի: Նորին բարձրութիւնը մեծ ցաւ յայտնեց է եկեղեցեաց ոմանց մէջ տեղի ունեցած ժողովրդական ցոյցերուն վրայ, և յիշեցուցրէ կայսերական բարեխնամ կառավարութեան 400 տարիէ ի վեր. Հայ ազգին վրայ ունեցած հայրական ու մորդատիրական խնամքները, և այն, և այն, որոնց սրբաւնակութիւնը այսօր մասնաւոր յայտարարութեամբ հրատարակած է խառն ժողովը: Միայն Ս. Պատրիարք Հօր հրաժարականի մասին՝ Նորին բարձրութեան ըսած խօսքը, — զոր ստոյգ ազբիս ըէ առած եմք — թէ « եթէ խառն ժողովը թագրի մ'ալ գրէ, բաւական կը համարի Նորին սրբաւնակութեան հրաժարականն ընդունելու, հերիք է որ ազգը օրինաւոր ճանաչուի — ինչպէս մինչև ցարդ կընէր — ներկայացունէ իր խնդիրը »:

— Մանգումէի Էֆքեար օրագիրն բարձրագոյն հրամանաւ դադրեցաւ երկու ամսուան համար,

կրտմք թէ՛ փանտեան էֆէնտիս երէկ լրագրական դրասենեակը բողբջելու դայեր է դադարման պատճառ

տուող յօլուածին սխալ հասկցուած կամ մեկնուած ըլլալուն համար: Այսօր ալ թէ՛ դադարման վճարակրն և թէ՛ իւր գիտողութիւնը պիտի հրատարակէ:

— Երմանամք որ ստիկանութիւնը մէկ քանի օրէ ի վեր սկսած է դարձեալ խուզարկութիւններ ընելու: Սրդէն խաղիւղէն 2—3 հօգի բռնուեր, և ուրիշներ ալ վնասուելու վրայ են:

— Կրտուի թէ, Հապէշաստան — չեմք գիտեր որ կողմերը — գանուող խահակ եղիակոպոսը յաջողեր է ինքնագիր նամակ մը հասցունել ամեն. Տ. Ենայի Ս. Պատրիարքին, և իւր ազատութիւնը խնդրել: Նորին բարձր սըրբազնութեան կողմանէ հեռագրով Պատրիարքարան հաղորդուեր և Անդգիոց կառավարութեան միջամտութիւնը խնդրուեր է:

Յաւալի է որ յիշեալ գեր. Հայրն և իւր ընկերակիցը տակաւին ազատած չեն, մինչդեռ ասկէց յառաջ հրատարակուեցաւ թէ՛ անոնց տեղը յայտնի է և Անդգիոց արտաքին դործոց պաշտօնէին կողմանէ հրաման եղած է զանոնք Հապէշաստանէն հանել ճանաչարհի և ուրիշ ծախք վճարելով:

—Երուսաղէմայ Միօն ամսագրոյն գեկտ . թուոյն մէջ կկարգւամք :

Ամենագատիւ Պատրիարք Հայրը , որ Աթոռոյ ծանր հոգացողութեան հետ միասին մեծ ինամք ունի նմանապէս քաղաքիս հայազգի ժողովրդեան վրայ , թէ իւր քարոզներուն մէջ եւ թէ առանձին շարունակ կը յորդորէր ժողովրդականքը , որպէս զի աշխատին ոչ միայն բարոյապէս , այլ եւ նիւթապէս իրարու աջակցել , իրարու օգնել եւ իրենց վիճակը բարւոքել : Ուրախ ենք որ Սրբազան Հօր սպասուէրները արդէն ըսկրած են արդիւնաւորիլ ոչ միայն արական այլ եւ իգական սեռին մէջ , եւ մենք բերկրութեամբ սրտի կը հրատարակենք ահա տեղւոյս ժողովրդային այս նոր եւ յուսաւիր շարժումը : Ամսոյ մէջ քաղաքիս հայազգի պատանիները միանալով հաստատեցին Խնայողական Բնիկութիւն , որոյ նպատակն է բաժանորդագրութեամբ գրամական նշանաւոր գումար կազմել եւ նոյնը շահեցնելով զանազան ընկերական շահաւէտ գործառնութիւններ կատարել : Պատանիներուն հետեւեցաւ իսկոյն հասակաւոր մարդկանց դասը , նոյնօրինակ ընկերութիւն մի կազմելով , աւելի ընդարձակ նըպատակներու համար : Բայց աւելի ուրախալին է , որ օրիորդք եւ տիկնայք եւս արական սեռի նախանձելի շարժումէն սթափելով առանձին ընկերութիւն հաստատեցին իրենց մէջ շրայութենէ զգուշանալ եւ խնայողական արկղ մի ունենալ իրենց սեռին վերաբերեալ հասարակային պիտոյքները հոգալու : Այս նորահաստատ ընկերութեանց պայմանագրերը եւ կանոնքը կընքեց Ս . Հայրը եւ յորդորեց ամեն անդամները անխտիան շարունակել : Արդարեւ վերջին քանի մի տարիներու մէջ ըստմութիւ ընկերութիւններ հաստատեցան եւ խափանուեցան յաճօթ եւ ՚ի նախատինս փոփոխափառ անդամոց , սակայն մենք քաջայայտ ենք , որ քաղաքիս նորահաստատ ընկերութիւնները , այլոց փորձէն օգուտ քաղելով եւ ամեն տեսակ անխաճեմութենէ

զգուշանալով կ'աշխատին հաստատուն մնալ իրենց օգտաւէտ ձեռնարկութեան մէջ ՚ի պատիւ իրենց անուան եւ յօրինակ բաղմաց :

Երբ տեսնենք ներկայ ընկերութեանց յարատեւութիւնը եւ միաբանական հաստատմանութիւնը կը խոստանանք եւ մենք որիչ անպամ աւելի ընդարձակ խօսիլ այս նիւթին վրայ եւ միանգամայն հրատարակել իրենց պայմանագրերը եւ կանոնքը Միօնի մէջ ՚ի գիտութիւն ազգայնոց :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Քուրիէ ա'Օրիան լրագրին ըսածին նայելով մայրաքաղաքս չորս «անձ» քաճի բաժնուած է , այն է Պօլիս , Էյուպ , Բերա եւ Իսկիւտար . Իւրաքանչիւր «անձ» միութեարըքի մը եւ գայմագամ պիտի ունենայ , հետեւաբար Բերայի ոստիկանապետ Մէհմէտ պէյը Բերայի «անձ»ին Ֆ-Բէսարըք անուանուեր է . եւ ոստիկանութեան ատենին այժմեան նախագահ Բէրթէվ Էֆէնտին Պօլիսի Ֆ-Բէսարըք անուանուեր է :

Իսկիւտարու ոստիկանապետ թօսուն փաշա Իսկիւտարու միւթէտարըքի եւ Հապիս փաշա Էյուպի միութեարըքի անուանուեր են :

Կրտուի թէ ոստիկանութեան պաշտօնէին միւսթէշար Միւնիֆ Էֆէնտին նախագահ ընտրուեր է միւլնոյն պաշտօնատեղւոյն մէջ հաստատուելիք բարձրագոյն ժողովոյն :

Իւրաքանչիւր սանձաքի մէջ դատարաններ հաստատուեր են , որոնց դատաւոր պիտի ընտրուին ոստիկանութեան դուռը նոյն պաշտօնն ունեցող տասն եւ եօթն անձերէն . անանկ որ ասոնցմէ հինգ կամ վեց հողի պիտի մընան : Զապրթա—մէճլիսը պիտի վերջուի :



—Մայրաքաղաքիս ամերիկեան դեսպանին փոխուելուն վրայ դարձեալ լուր կայ, բայց Լէվընթ անհիմն կհամարի :

—Ռումանիոյ ներկայացուցիչը Պ. Մթուրցա՝ իւր առաջին քարտուղարին և առաջին թարգմանին հետ ընկերացած՝ պատիւ ունեցաւ օգոստոսիառ Սուլթանին ներկայանալ, և յայտնել կարողս իշխանին երախտագիտութիւնը օգոստոսիառ Սուլթանին՝ սոյն իշխանին գրած նամակին համար : Կայսերական գիւանին առաջին թարգման Սրիֆի պէյը ներկայ է եղեր :

—Տարածայնութիւն մը կայ թէ Շիրայի նաւահանգիստը գանուող Օսմանեան նաւատորմիցը հրաման ընդուներ է հելլենական ջրերէն մեկնելու :

Մեղի անհաւանական կլթուի, կըսէ Լա թիւրքի որ այս լուրը կհաղորդէ. ըստ որում Օսմանեան նաւատորմիցը չը կրնար Շիրայէն մեկնել, մինչև որ հելլենական կառավարութիւնը գոհացուցիչ կերպիւ չպատասխանէ Բ. Գրան վերջնագրոյն :

—Լա թիւրքի լրագրէն կըպղենք : «Բարձր մեծեպարքոսը կրեաէէն դառնալով իւլէմաներէ բազկացեալ ժողով մը կազմեր էր, որպէս զի Գուրանին մէջ օրէնագրութեան նկատմամբ գրանուածները տաճկերէնի թարգմանուին :

Այս գործը լմնեալու վրայ ըլլալով կըսուի թէ Շուրայի Տէվլէթին պիտի ներկայացուի որպէս զի կարեւոր փոփոխութիւններն ըլլան. կըսուի թէ այս փոփոխութիւնները աւարտելէն վերջը պիտի հրատարակուի այս գործը » :

—Մերիկայի մէջ Տաճկաստանի նըկատմամբ եղած գրութիւնները հրատարակուեր են : Աս հրատարակու

թեամբ կտեսնուի որ մայրաքաղաքիս ամերիկեան դեսպանը բարձր. Սալի փաշայի հաղորդեր է օգոստոսի մէջ Միացեալ—Նահանգաց ազգային ժողովոյն որոշումը, միանգամայն յայտնելով կրետայւոց համար սոյն հասարակապետութեան ունեցած կարեկցութիւնը : Բարձր. Սալի փաշա յայտներ է իւր զարմանքը, բայց խորհրդածութիւն չէ ըրեր :

—Կըսուի թէ չիքնար գիտցուիլ Յունաստանի որոշումը յառաջակայ ուրբաթ օրէն առաջ. հետեւաբար Յունաստանի գեսպանաժողովոյն յայտարարութիւնը մերժելուն լուրը սուտ է : Նոյնպէս սուտ կհանեն գլխաւոր դեսպանաց փարիզ կանչուելու լուրը. միայն թէ հաւանական է որ Պ. Պէնէտէթի փարիզ երթայ :

ԱՐՏՄԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Եւրոպական հեռագիրք կծանուցանեն :

Պաշտօնական կերպով սուտ կհանեն այն լուրը, որով կհաստատուէր թէ գեսպանաժողովոյն հելլենական կառավարութեան զրկած յայտարարութիւնը Յունաստանի նկատմամբ ծանր խօսքեր կպարունակէ :

Փարիզի մէջ հրատարակուած հեռագիր մը՝ որ մայրաքաղաքէս զրկուած է եղեր, կծանուցանէ թէ Յունաստան մերժած է գեսպանաժողովոյն յայտարարութիւնը : Բայց այսպիսի լուր մը ի պաշտօնէ հաղորդուած չէ :

Ռումանիայէն Պուլկարիա և թըրանսիլվանիա զէնք և պատերազմական մթերք զրկուած ըլլալուն լուրը, նոյնպէս Քուպա կզըոյն սակարկութեան համար եղած բանակցութեանց նկատ

մանք Կոնստնի Թայմրդ լրագրին հաղորդած լուրը սուտ են :

Իրզպօնի ազգային ժողովը լուծուելով Թագաւորական հրովարտակմը կհաստատան թէ յառաջիկայ մայիս 4ին խորհրդարանը պիտի բացուի :

—Վերթեմայէրիկի և Պալիէրայի կաւալարութիւնները սուտ կհանեն այն լուրը որով կհաստատուէր թէ յիշեալ անբութիւնները բանակցութիւնները քննելով հրահրային Գերմանիոյ դաշնակցութեան հետ , արտօնութիւն կուտային իրենց հզատակաց՝ փոփոխակի կերպով այս երեք անբութեանց քով զինուորական ծառայութեան մտնելու :

—Կրուի թէ Սպանիոյ ազգային ժողովին նախագահ պիտի ընտրուի Պ. Ռիվէրո :

—Եւրոպական հեռագիրք կծանուցանեն թէ Չիլիթա Վէրքիա կրկին օգնութեան դորք զրկելու լուրը սուտ է : —Դեռարանածօղովին որոշումները սրբաթ օրը Աթէնքի խորհրդարանին ներկայացուցեր են :

—Պարբէշի պատղամաւորաց խորհրդարանին մէջ ներքին պաշտօնեացի յանդիմանութիւնմը բրեր Պ. Պրաթիա նօի՝ չարաւորութիւն մը չցուցնելուն համար . և ստարակոյս կայ այն խորհրդարանին մէջ համաձայնութիւն մը ըլլալուն :


—Գերին դիրքը Գաղղիոյ օրէնագրական ժողովին բաժնուեցաւ . բան մը ճշանակէր Գերմանիոյ դործոց նրկատմամբ : Թուրքօ —հելլենական գրծատութիւնը նիթ պիտի պատրաստան վերջին հրատարակութեան մը : Ռումանիոյ դործոց նկատմամբ կարմիր դերքը կըսէ թէ Գաղղիոյ Ռումանիոյ հետ սենեցած յարաբերութեանց պլայելլուն պատճառաւ Գաղղիա չկրնար անտարբէ

րութեանք օգնել վտանգաւոր քաղաքականութիւն մը զարդանալու : Ռումանիա կոնստաւոր պայմաններու մէջ մտնալով փոխճան մը պիտի տայ անհանդատութեանց և վտանգաց :



Ռասիկանութեան պաշտօնատան վերաբերեալ բարեկարգութիւններ ըլլալով նոր փոփոխութիւններ եղած են , զորս վաղը պիտի կրնանք հրատարակել :

—Կայսերական կաւալարութիւնը անգղիական շոգենաւ մը գներ է 28000 լիրայի :



—Նոր Զէլանտի մէջ տարօրինակ բարբարոսութեամբ սպանուեր են 50ի չափ եւրոպացիք իրենց ընտանեաց հետ :

—Ամերիկայի հասարակապետութիւնը Նիւ Եօրքէն մինչեւ Ս. Յրանչիսքօ երկաթուղի մը շինել սկսեր է : Այս շինութիւնը երբ ի գլուխ տարուի , այսուհետեւ Անգղիայէն մինչեւ Չինաստան 33օր պիտի աւելի , մինչդեռ 33 օրուան ճամբայ է :

—Ամերիկայի մէջ երկու հողի խիստ գեղեցիկ աղջկան մը սիրահարելով , երկուքն ալ կուզեն կարգուիլ անոր հետ . եւ այս պատճառաւ մէջերնին մեծ վէճ ծագելով վերջապէս մեծամարտելու կենն , բայց դիպուածը երկուքն ալ անվտանգ կը պահէ : Ասոր վրայ վկայները կհաշտեցունեն զանոնք եւ կորոշուի աղջկան կամքն հարցունելը Աղջիկը կայանէ թէ ինք արիշ նշանած մ'ունենալով մօտերս պիտի պրսակուի անոր հետ , եւ միանգամայն զանոնք հարսանիքի կհրաւիրէ : Այս անակնկալ յայտարարութիւնը կշուարեցունէ երկուքն ալ , եւ կստիպուին երեսնին կախած գատուիլ աղջիկէն :

ՏՆՕՐԻՆ ԵՒ ՏԵՐ
Հ . Ս . ԱՆՁԱՅԱՅԱՆ

ՏՐԱԳՐՈՒԹԻՒՆ Գ . Յ . ԳՈՒՐԱԾԱՅԱՆ